ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 192-Ա
« 07 » ՀՈՒԼԻՍԻ 2025Թ

ԱՐՍԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2335 որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի տեղակալ Արսեն Խաչատրյանին 2025 թվականի հուլիսի 8-ին գործուղել ք. Երևան, մասնակցելու ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայությունում կայանալիք աշխատանքային խմբի հերթական նիստին՝ Հայաստանի Հանրապետությունում անտառային հնարավոր հրդեհավտանգ իրավիճակների մշտադիտարկման, հրդեհների կանխարգելման, անհրաժեշտ կարողությունների գնահատման, արագ արձագանքման, հրդեհների դեմ պայքարի, ինչպես նաև դրանց հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով: Վերադարձի օրը 2025 թվականի հուլիսի 9-ին:
2. Գլխավոր հաշվապահին՝ Արսեն Խաչատրյանի գործուղման հետ կապված ծախսերը (օրապահիկ, ճանապարհածախս, գիշերավարձ) կատարել Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ներքին գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

Ք.Եղեգնաձոր